# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-ԻՆ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 23. 09 2017 թվական

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Կողմ-1), ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և «Հայփոստ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս ընկերության գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Ավագյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման, (այսուհետ՝ Կողմեր) 2014թ. մայիսի 26-ին կնքված՝ «Պետական նպաստների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 24 օգոստոսի 2017 թվականի « Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1047-Ն որոշումը, Կողմերը որոշել են «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Հայփոստ» ՓԲ ընկերության միջև 2017 թվականի փետրվարի 20-ին կնքված «Պետական նպաստների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի գինը սահմանելու մասին» համաձայնագրում «491 671 242 (չորս հարյուր իննսունմեկ միլիոն վեց հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր քառասուներկու)» ՀՀ դրամ բառերը փոխարինել «488 222 242 (չորս հարյուր ութսունութ միլիոն երկու հարյուր քսաներկու հազար երկու հարյուր քառասուներկու)» ՀՀ դրամ բառերով:

1) N 1 հավելվածի՝ 10 բաժին, 09 խմբի, 02 դասի N 17 «"ՎՏԲ- Հայաստան" ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրով ֆինանսավորման համար սահմանված

հատկացումները, Կողմերը համաձայնվել են 2017 թվականի համար Պայմանագրի գինը սահմանել «17 821 783 (տասնյոթ միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար յոթ հարյուր ութսուն երեք)» ՀՀ դրամ:

2) N 1 հավելվածի՝ 10 բաժին, 09 խմբի, 02 դասի N 19 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրով ֆինանսավորման համար սահմանված հատկացումները, Կողմերը համաձայնվել են 2017 թվականի համար Պայմանագրի գինը սահմանել «470 400 459 (չորս հարյուր յոթանասուն միլիոն չորս հարյուր հազար չորս հարյուր հիսունինը)» ՀՀ դրամ:

## 2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

2.3. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.3. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

| | |
|---|---|
| ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն<br>ք.Երևան Նալբանդյան 13<br>Հ/Հ 900011010890<br>Հ/Հ 900011011161<br>ՀՎՀՀ 02505511<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>գործառնական վարչություն<br>Ծառայության աշխատակազմի ղեկավար | «Հայփոստ» ՓԲ ընկերություն<br>ք.Երևան Սարյան 22<br>Հ/Հ 1930003703150100<br>ՀՎՀՀ 02507464<br>"Կոնվերսբանկ" ՓԲԸ<br><br>Գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար |
| ________________Մ.Մինասյան<br><br>Կ.Տ | ________________Հ.Ավագյան<br><br>Կ.Տ |